

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 30.08.2019թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 24 (քսանչորս) անդամից՝ 21-ը (քսանմեկը), 2-ը ուղարկված օրակարգային հարցի վերաբերյալ քվեարկել են հեռահար կապի միջոցով (էլեկտրոնային նամակները կցված են արձանագրությանը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Մկրտչյան Արթուր Վազգենի** — Ռազմական ամբիոնի պետ
6. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. **Մելքոնյան Հովիկ Մենեքերիմի** -Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝
9. **Հովհաննիսյան Արտաշես Ալեքսանի**– Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ
10. **Քալաջյան Ռաֆֆի Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
11. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
12. **Հայրապետյան Սերգո Արտուշի** -Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
13. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
14. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ

15. **Տեր-Ադամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
16. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
17. **Խորիկյան Հովհաննես Գեորգու-** Պատմության և փիլիսոփայության ամբիոնի ԺՊ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
18. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
19. **Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
20. **Սարգսյան Արմենուհի Հակոբի-Գիտական** քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
21. **Հովհաննիսյան Լիլիթ Գոռի-** Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 3-րդ կուրսի ուսանողուհի

## ՕՐԱԿԱՐԳ

### 1. 2019-2020 թթ ուսումնական պլաններում կատարված բարեփոխումների ու դրանց հաստատման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտորի ԺՊ՝ Ն. Ավետիսյան

#### Ընթացիկ հարցեր

Գիտական խորհրդի նախագահը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին, շնորհավորեց գիտական խորհրդի անդամներին նոր ուսումնական տարվա առթիվ, այնուհետև ներկայացրեց, որ նիստի օրակարգն ու օրակարգային հարցը նախորոք էլեկտրոնային նամակի միջոցով ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին, քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

#### 1. ԼՍԵՑԻՆ՝

##### 2019-2020 թթ ուսումնական պլաններում կատարված բարեփոխումների ու դրանց հաստատման մասին:

Ն. Ավետիսյանը ներկայացրեց, որ 2019-2020 թթ ուսումնական պլաններում կատարված բարեփոխումների նպատակը դրանցում առկա բացերը և թերությունները շտկելու նպատակ ունեն, դրանք նախորոք ամբիոնի վարիչների և ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի աշխատակիցների համատեղ աշխատանքով արդեն իսկ կազմվել և ներկայացվել են գիտական խորհրդի անդամներին:

Տիկին Ավետիսյանը նշեց այն ուղղությունները, որոնցում կատարվել են 2019-2020 ուստարում ուսումնական պլանների բարելավմանն ուղղված փոփոխություններ: Բարեփոխումները կատարվել են հետևյալ ուղղություններով.

Առաջարկվել են հետևյալ փոփոխությունները՝

«Սերվիս» մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում փոփոխել ուսումնական պրակտիկաների ժամաքանակները՝ ներառելով լսարանային ժամերի մեջ:

**«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում առկա 3-րդ կուրս 1-ին կիսամյակում ավելացնել «Սպորտային խաղեր՝ հանդբոլ» առարկան՝ 5 կրեդիտ, իսկ 2-րդ կիսամյակում «Սպորտային խաղեր՝ ֆուտբոլ առարկան»՝ 5 կրեդիտ՝ կատարելով առարկաներին հատկացվող կրեդիտների փոփոխություն: 4-րդ կուրս 1-ին կիսամյակում «Կուրսային աշխատանքը» փոխարինել «Հատուկ մանկավարժություն» առարկայով՝ 3 կրեդիտ, 2-րդ կիսամյակում ավելացնել «Հրաձգություն» առարկան՝ 3 կրեդիտով, «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան փոխարինել «Սպորտ խաղեր՝ թենիս/ձեռնամարտ» առարկայով՝ 6 կրեդիտ՝ կատարելով առարկաներին հատկացվող կրեդիտների փոփոխություն: Հեռակա 3-րդ կուրս 2-րդ կիսամյակում «Հոգեբանություն» առարկան փոխարինել «Սպորտի հոգեբանություն» առարկայով՝ 5 կրեդիտ, «Սպորտի ֆիզիոլոգիա» առարկան տեղափոխել 2-րդ կուրս 2-րդ կիսամյակ՝ 4 կրեդիտ՝ կատարելով առարկաներին հատկացվող կրեդիտների փոփոխություն: Հեռակա ուսուցման 4-րդ կուրսի 1-ին կիսամյակում ավելացնել «Հատուկ մանկավարժություն» առարկան՝ 3 կրեդիտ, իսկ «Շախմատ» առարկան տեղափոխել 2-րդ կուրս 2-րդ կիսամյակ՝ կատարելով կրեդիտների փոփոխություն: Միայն 2019-2020 ուստարում որպես անցումային պլան «Հոգեբանություն» առարկան հանել 3-րդ կուրս 2-րդ կիսամյակից, 4-րդ կուրս 1-ին կիսամյակում ավելացնել «Հատուկ մանկավարժություն» առարկան՝ 3 կրեդիտ, 5-րդ կուրսի 1-ին կիսամյակում հանել «Ընթացմարտ» առարկան, 2-րդ կիսամյակում «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան փոխարինել «Սպորտ խաղեր՝ թենիս/ձեռնամարտ» առարկայով՝ 6 կրեդիտ, ավելացնել «Հրաձգություն» առարկան՝ 3 կրեդիտ (5-րդ կուրսի 2-րդ կիսամյակի փոփոխությունները կատարել նաև հիմնական պլանում) և վերաբաշխել կրեդիտները:

**«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա, մագիստրոս)՝ մասնագիտական առարկաների շրջանակում առկա 4-րդ կուրսի 1-ին կիսամյակից հանել «Կուրսային աշխատանքը» և 6 կրեդիտը վերաբաշխել: Հեռակայում 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում «Մանկական հիվանդություններ» առարկան փոխարինել «Մանկավարժություն» առարկայով, իսկ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում «Մանկավարժություն» առարկան փոխարինել «Մանկական գրականություն» առարկայով: Հեռակա 5-րդ կուրսից հանել «Կերպարվեստ և նրա դասավանդման մեթոդիկա», «Տեխնոլոգիա և նրա դասավանդման մեթոդիկա» առարկաները և կուրսային աշխատանքները՝ վերաբաշխելով կրեդիտները: Մագիստրոս 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում «Քերականության ուսուցման մեթոդիկա» առարկան փոխարինել «Հայոց լեզվի տեսություն» առարկայով:

**Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»** մասնագիտական կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ հեռակա 5-րդ կուրսի 1-ին կիսամյակից հանել «Կուրսային աշխատանքը» և 6 կրեդիտը վերաբաշխել:

**«Սոցիալական մանկավարժություն»** մասնագիտական կրթական ծրագրում (հեռակա)՝ հեռակա 5-րդ կուրսի 1-ին կիսամյակում «Կուրսային աշխատանքը» փոխարինել «Սոցիալական աշխատանքի հիմունքներ» առարկայով: Հեռակա ուսուցման 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակում «Կուրսային աշխատանքը» փոխարինել «Սոց. մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա» առարկայով:

**«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»** մասնագիտության կրթական ծրագրում (մագիստրոս)՝ մասնագիտական առարկաների շրջանակում 1-ին կուրսի 1-ին կիսամյակում «Programming paradigms» առարկան փոխարինել «Java core programming» առարկայով, 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում «Web կիրառությունների նախագծում և մշակում» առարկան փոխարինել «Մաթեմատիկական մոդելավորման ընտրովի հարցեր» առարկայով, 2-րդ կուրս 1-ին կիսամյակում «Մպլայնների տեսություն» առարկան փոխարինել «Բնագիտական խնդիրների մաթեմատիկական մոդելավորում» առարկայով:

Առկա ուսուցման 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում «Ծրագրավորման լեզու C առարկան» փոխարինել «Web ծրագրավորման հիմունքներ» առարկայով:

**«Մաթեմատիկա»** մասնագիտության կրթական ծրագրում (մագիստրոս)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել լսարանային ժամերի փոփոխություն:

**«Համակարգչային գրաֆիկա»** մասնագիտության կրթական ծրագրում (առկա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել լսարանային ժամերի փոփոխություն:

**«Դեկորատիվ կիրառական արվեստ»** մասնագիտության կրթական ծրագրում (մագիստրոս)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել լսարանային ժամերի փոփոխություն:

**«Ռուսաց լեզու և գրականություն»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել ստուգման ձևերի մասնակի փոփոխություններ:

**«Թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն »** մասնագիտության կրթական ծրագրում (առկա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել ստուգման ձևերի և առարկայի անվանման մասնակի փոփոխություններ:

**«Անգլերեն լեզու և գրականություն»** մասնագիտության կրթական ծրագրում (առկա, մագիստրոս)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել ստուգման ձևերի մասնակի փոփոխություններ:

**«Իրավագիտություն»** մասնագիտության կրթական ծրագրում (հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել մասնագիտական առարկաների փոփոխություն՝ միայն 2019/2020 ուստարում «ՀՀ սահմանադրական իրավունք» առարկայի փոխարեն մտցնել «Քրեագիտություն» 6 կրեդիտ՝ հեռակա 5-րդ կուրսի 2-րդ կիսամյակում:

**«Պատմություն»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել մասնագիտական առարկաների փոփոխություն՝ «Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն» առարկայի փոխարեն մտցնել «Հայոց պատմության պատմագրություն» առարկան 3 կրեդիտ՝ առկա/հեռակա 4-րդ և 5-րդ կուրսի 1-ին կիսամյակներում:

**«Գենսաբանություն»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում փոփոխել ուսումնական պրակտիկաների ժամաքանակները՝ ներառելով լսարանային ժամերի մեջ:

**«Դեղագործական քիմիա»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում փոփոխել ուսումնական պրակտիկաների ժամաքանակները՝ ներառելով լսարանային ժամերի մեջ:

**«Աշխարհագրություն»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում փոփոխել ուսումնական պրակտիկաների ժամաքանակները՝ ներառելով լսարանային ժամերի մեջ:

**«Հայոց լեզու և գրականություն»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկաների շրջանակում կատարել ստուգման ձևերի և ժամաքանակների մասնակի փոփոխություններ: Միայն 2019/2020 ուսումնական տարում առկա ուսուցման 4-րդ կուրսի 1-ին կիսամյակից հանել «Հայերենի պատմական քերականություն» առարկան, 2-րդ կիսամյակի «Գրականության տեսություն» առարկան փոխարինել «Հայոց լեզվի պատմություն» առարկայով՝ 5 կրեդիտ և կատարել կրեդիտների վերաբաշխում: Միայն 2019/2020 ուսումնական տարում հեռակա 5-րդ կուրսի 1-ին

կիսամյակում «Կուրսային աշխատանքը» փոխարինել «Հայոց լեզվի ոճագիտություն» առարկայով՝ 3 կրեդիտ:

**«Լրագրություն»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա) կատարել ստուգման ձևերի և ժամաքանակների մասնակի փոփոխություններ: Միայն 2019/2020 ուսումնական տարում «Լրագրություն» առկա և հեռակա 3-րդ կուրսում «Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկան փոխարինել «Լրագրություն և մարդու իրավունքներ» առարկայով: Լրագրություն առկա 4-րդ կուրս 2-րդ կիսամյակում «Հեռուստահաղորդավարի աշխատանքի հիմունքներ և մեկնաբանի աշխատանքը եթերում» առարկան փոխարինել «Լրագրային/տպագիր/ ժուռնալիստիկա» առարկայով:

**«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)»** մասնագիտության կրթական ծրագրում (առկա)՝ մասնագիտական առարկայի շրջանակում 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում «Վիճակագրություն» առարկայից հանել ուսումնական պրակտիկային հատկացված ժամաքանակը:

**«Սոցիալական աշխատանք»** մասնագիտության կրթական ծրագրերում (առկա, հեռակա)՝ մասնագիտական առարկայի շրջանակում առկա ուսուցման 3-րդ կուրս 2-րդ կիսամյակում ավելացնել «Երիտասարդների հետ աշխատանքի հիմունքներ»՝ հատկացնելով 2 կրեդիտ:

Հիմք՝ մասնագիտական ամբիոնների նիստերի արձանագրությունների քաղվածքները և ամբիոնների վարիչների ներկայացրած զեկուցագրերը:

Տիկին Ավետիսյանը նշեց, որ հարցի վերաբերյալ դիտարկումներ չեն ստացվել և ինքը ակնկալում է գիտական խորհրդի անդամների աջակցությունը 2019-2020 թթ ուսումնական պլանները հաստատելու առնչությամբ:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հաստատել 2019-2020 ուստարում գործող ուսումնական պլանները՝ բարելավմանն ուղղված փոփոխություններով հանդերձ:

Գիտական խորհրդի նախագահը հարցը դրեց քվեարկության:

## **ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝**

23 անդամ. կողմ՝ 23 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Գիտական խորհրդի անդամներից 2-ը՝ Հ. Դրմեյանը և Լ. Մարտիրոսյանը գտնվում էին Երևանում՝ ԲՈԿ-ի մասնագիտական խորհրդի նիստերին մասնակցելու նպատակով, այդ իսկ պատճառով քվեարկել են հեռահար կապի միջոցով (էլեկտրոնային նամակները կցված են արձանագրությանը):

## **2. Ընթացիկ հարցեր**

## **2.1 Համալսարանի հավատարմագրման գործընթացի շուրջ կազմակերպչական հարցերի մասին**

Պարոն Սերոբյանը նշեց, որ այս ուսումնական տարին առանձնահատուկ է համալսարանի համար նրանով, որ բուհը հավատարմագրման փուլ պետք է անցնի և հորդորեց, որ ինքը ակնկալում է միահամուռ ու միասնական աշխատանք բուհի բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների կողմից:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

**Վ. Խաչատրյանը**, ում հետաքրքրում էր, թե ինչու<sup>օ</sup> համատեղող դասախոսները բուհի ամբիոններում պետք է լրացնեն համապատասխան ձևաթուղթ այն մասին, որ բացի համալսարանից, այլ աշխատավայրում էլ են աշխատում: Ըստ պարոն Խաչատրյանի համալսարանում պրոֆեսորի աշխատավարձը ցածր է, կազմում է 180 000 ՀՀ դրամ և եթե նա մեկ այլ աշխատանք էլ է գտել այլ վայրում, ինչու<sup>օ</sup> է արգելվում միասին 1,5 դրույքից ավելի ժամաքանակ ունենալը: Այնուհետև պարոն Խաչատրյանին հետաքրքրում էր նաև, թե աշխատավարձի բարձրացման համար ի<sup>օ</sup>նչ աշխատանքներ են կատարվում:

**Պարոն Սերոբյանը** պատասխանեց, որ 1,5 դրույքի մասին հարցը կարգավորվում է աշխատանքային օրենսգրքով՝ 139 հոդվածով, այսինքն օրենսդրական դրույթ է և ինքը պարտավոր է այն պահպանել, իսկ ինչ վերաբերում է համալսարանում պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատավարձի բարձրացմանը, ապա ցավոք, ինքը չի կարող առաջիկայում խոսել դրա մասին, քանի որ համալսարանի սուղ ֆինանսական միջոցները առայժմ մնան հնարավորություններ չեն ստեղծում:



Գիտական խորհրդի նախագահ՝  
Գիտական խորհրդի քարտուղար՝  
Արհմիութենական  
կազմակերպության նախագահ՝

Ե. Մերոբյան  
Կ. Պետրոսյան  
Վ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական  
ֆակուլտետի դեկան՝

Բ. Պողոսյան

Սոցիալական գիտությունների և  
իրավունքի ֆակուլտետի դեկան՝

Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝  
Ուսումնագիտական  
խորհրդատվական կենտրոն-  
գրադարանի տնօրեն՝

Ա. Մկրտչյան

Թ. Խաչատրյան

Արտաքին համագործակցության և  
հասարակայնության հետ կապերի  
կենտրոնի տնօրեն՝

Հ. Մելքոնյան

Ֆինանսատնտեսական  
վերլուծությունների, ծրագրավորման  
և հաշվապահական հաշվառման  
բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝

Ռ. Քալաջյան

Անձնակազմի կառավարման և  
իրավական ապահովման բաժնի պետ՝

Ա. Հովհաննիսյան

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների  
ամբիոնի պրոֆեսոր՝

Ս. Սարգսյան

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների  
ամբիոնի պրոֆեսոր՝

Հ. Դրմեյան

Անգլերեն լեզվի և գրականության  
ամբիոնի պրոֆեսոր՝

Ա. Հովհաննիսյան

Հայոց լեզվի և գրականության  
ամբիոնի դոցենտ՝

Ս. Հայրապետյան

Մանկավարժության ամբիոնի  
պրոֆեսոր՝

Ռ. Մարդոյան

Հումանիտար գիտությունների և  
արվեստի ֆակուլտետի դեկան՝

Թ. Մելիքյան

Միջմշակութային հաղորդակցության  
և զբոսաշրջության ամբիոնի  
ասիստենտ՝

Շ. Տեր-Ադամյան

Մանկավարժության ամբիոնի  
դոցենտ՝  
Պատմության և փիլիսոփայության  
ամբիոնի դոցենտ՝

Լ. Ղուկասյան

Հ. Խորիկյան

Մանկավարժության ամբիոնի  
դոցենտ՝  
Գիտական  
քաղաքականության, որակի  
ապահովման և կառավարման  
կենտրոնի տնօրեն՝  
Աշխարհագրության,  
կենսաբանության և քիմիայի ամբիոնի  
դոցենտ՝

Լ. Հակոբյան

Ա. Մարգարյան

Լ. Մարտիրոսյան

Բնագիտամաթեմատիկական  
ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 3-  
րդ կուրսի ուսանողուհի

Լ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոն,  
«Նախագորակոչային և ֆիզիկական  
պատրաստություն» 4-րդ կուրսի  
ուսանող՝

Ս. Հարությունյան

